

Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Զ Ե Ր Ք Է Զ Ե Ա Ն Յ Ն Ա Մ Ա Կ

Ա Մ

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն Յ

(Վերջ. Տես էջ 42, 53, 100 և 115.)

Մեք ասել էինք, պ. Նազարեանց, Թէ քո օրագիրը աններելի արհամարհանքով, սանձարձակ եւ անդուն ընթանով խօսումէ միշտ մեր Հայոց ազգի նշանաւոր եւ երեւելի անձանց վերայ: Դու այժմ ցանկանում ես ցոյց տալ այդ մեր խօսքի իբր ստույթներ, վասն որոյ յառաջ եւ բերում քո գրութիւնը հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսի մասին եւ ասում ես, Թէ նորա վերայ միայն այն եւ գրել, Թէ՝ «Նա չէր կարողացել գնահատել բարեշիշտական Արովանցի արժանաւորութիւնը»: Այդ պատասխանի մէջ ամենայն ողջամիտ ընթերցող կարող է տեսնել յայտնի ստույթներ եւ անդատողութիւն: Ստույթներ, որովհետեւ միայն այդ չէ Հիսկիապալի մէջ տալարած վատարանութիւնը մեր տիեզերահռչակ Ներսէս Կաթողիկոսի մասին, այլ կան միւս եւս աններելի բարբառներ նորա վերայ, որպէս ցոյց կտանք ցածումը: Անդատողութիւն, վասն զի կամենալով հաստատել, Թէ դու չես վատարանել Ներսէս Կաթողիկոսին, բերում ես քո գրութեանից այնպիսի օրինակ, որ առաւել ապացուցանում է մեր ցուցմանց ճշմարտութիւնը, եւ ոչ Թէ քո անմեղութիւնը այդ դիպուածում: Ասում ես՝ «Ներսէսը չէր կարողացել գնահատել բարեշիշտական Արովանցի արժանաւորութիւնը»: Այդ խօսքը վատարանութիւն չէ՝ արդեօք Ներսէսի համար. ինչ մարդ է այն մարդը, որ չէ կարողանում գին դնել արժանաւոր մարդու անտարակոյս, կամ յիմար է այդպիսի անձը, կամ նախանձոտ եւ կամ չարամիտ, վասն որոյ եւ վնասակոր հասարակութեան համար. այդպէս չէ՞, քննող ու զննող քրիստոնեայ. եթէ այդպէս չէ, այսինքն՝ եթէ արժանաւոր մարդու գին չգնողը իմաստուն, բարեմիտ եւ ազգօգուտ մարդ է, այն ժամանակ կհաստատնք, Թէ չես վատարանել Ներսէսին՝ ասելով, *եւ չէր կարողացել գնահատել բարեշիշտական Արովանցի արժանաւորութիւնը*: Ինչ օգուտ է մարդու լինել ասիական լեզուարանութեան դոկտոր եւ իւր մայրենի լեզուով սեփական գրութեանի միտքը չհասկանալ: Ցայտնի զգալով մեր ցուցմանց ճշմարտութիւնը, սկսանում ես նոր ինքոյ գովել Ներսէսին, եւ ինչ եւ ասում. «Ներսէս Կաթողիկոսի արժանաւորութիւնը ոչ որ չէ ուրանում, մանաւանդ առելի ճանաչումն նորան արդի պայմաններին մէջ»: Ինչքա՞ն նոր եկաւ գլուխը. փառք Աստուծոյ. հազիւ. Թէ կարողացար հասկանալ, Թէ ո՞վ էր Ներսէսը. ջնջիր ուրեմն վերեւումը բերած խօսքը, Թէ նա չէր կարողացել գնահատել Արովանցի նման արժանաւոր անձանց. համագումարն պատառի կամ այլրի քո Հիսկիապալի 1858 թ. 11 ամսատետրակը, ուր գրում է Ներսէսի համար, 432 եւ 434 երեսներում, Թէ՝ «Վիճակաւոր արքեպիսկոպոսը (Մատթէոս) ըստ ուսած էր Կաթողիկոսի (Ներսէսի) ինքնիշխան եւ անպատասխանատու բնաւորութիւնը. . . այդ մի նոր հաշուատեսութեան եղանակ էր, մի միայն Ներսէս Կաթողիկոսին սեպհական»: Այդ համարձակասոս եւ աններելի արհամարհանքով գրութեանը ծածկում ես ընթերցողների տեսութիւնից եւ բերում ես միայն Արովանցի օրինակը, Թէպէտ եւ ասում ես, Թէ օրագրիդ խօսքերը բոլորը նոյնութեամբ դուրս կվայելցնես: Վասն

է՞ր եւ Թագուցանում այդ գրութեանը. Թող տեսնեն ընթերցողները, Թէ որպէս քո օրագիրը ընծայում է մեր անմահ Ներսէս Կաթողիկոսին *ինքնիշխան եւ անպատասխանատու բնաւորութիւն*, սեւ երանգներով նկարագրում է նորա մէջ մին առանձին հաշուատեսութեան եղանակ, այնչափ ցած ու վատ, որ ոչ որ աշխարհի երեսումը չէ տեսնել, ասելով՝ *մի միայն Ներսէս Կաթողիկոսին էր սեպհական այնպիսի հաշուատեսութիւնը*: Այն մարդը, որ չէր կարողանում գնահատել արժանաւոր անձանց, որ ունէր ինքնիշխան եւ անպատասխանատու բնաւորութիւն, եւ մի նոր վատարաբան հաշուատեսութիւն, իւրեան միայն սեպհական, ինչ պէտք էր շինէր արդի պայմաններին մէջ. գուցէ քո պէս արժանաւոր, քննող ու զննող մարդու գին չգնէր, գուցէ իւր անօրինակ հաշուատեսութեան եղանակով վնաս բերէր մեր ազգին եւ իւր ինքնիշխան բնաւորութեամբ ազատ լինէր ամենայն պատասխանատուութիւնից. այնպէս չէ՞. այդ միայն կարող էր առնել Ներսէսը, քո սեփական օրագրի քննութեամբ: Ներսէսին այնքան եւ ճանաչել, որքան արդի պայմանները. արդի պայմանները այնչափ եւ հասկացել, որչափ Ներսէսին, միմէ կարծում ես, խնձ Նազարեանց, քո ողորմելի ընկերների հետ, Թէ քո իմացած ու քարոզած արդի պայմանների գլխաւորը՝ մեր եկեղեցու ոտքից մինչեւ գլուխ վերանորոգութիւնը՝ կընդունէր Ներսէսը. վայ թե՛ք եւ նախնականցին, եթէ կենդանի լինէր Ներսէսը, աշխարհիս հողագնդի վերայ տեղ չէ՛ր գտանելու ձեր պայմաններով. արդարեւ այդ պայմանի համար շատ եւ շատ հարկաւոր էր Ներսէսը. այդ իրաւ է:

Մեք ասել էինք, Թէ Սանսկրիտի լեզուի վերայ չենք խօսելու, կամենալով ցոյց տալ դորանով, Թէ մեք քեզ նման՝ մեզ անմանօթ լեզուների վերայ քննութիւն չենք անելու. եւ համապատասխան քո հայերէն գրաբան լեզուով գրած հոգեբանութիւնը՝ կօչել էինք սանսկրիտարանութիւն. վասն որոյ քո դատողութեամբ գտել եւ այդ բանի մէջ հակաճառութիւն: Բո գրաբան հայերէն գրութիւնը սանսկրիտարանութիւն անուանելը, քննող ու զննող քրիստոնեայ, չէ՛ նշանակում ամենեւին սանսկրիտի լեզուն քննել: Այդ բանը եւս պէտք է հասկացնենք քեզ: Եթէ մին գրութեան մէջ չենք գտնում ազգային լեզուի յատկութիւնները, նորա սեփական ձեւերը եւ հոգին, նա եւս քերականական ուղղութիւն, այն ժամանակ ասում ենք՝ *սա հայերէն չէ՛*. եւ որովհետեւ հայերենի նման չէ՛, շատ անգամ փոխանակ ասելու՝ *սա հայերէն չէ՛, ասում ենք՝ սա Թուրքերէն է՛*. կամ արաբերէն, կամ սանսկրիտերէն. այդ միջոց որ լեզուի որ կամենաս անունը տալ, յարմար է այդ մտքին եւ չէ՛ նշանակում երբէք, Թէ որ եւ իցէ այլ լեզուի անունը տուողը, գիտէ այն լեզուն կամ քննում է այն լեզուի յատկութիւնները: Այդ եւս չգիտէիր, քննող ու զննող *հարցապետ*. ու դեռ եւս ասում ես անմանօթաբար, Թէ մեզանից բան չունես սովորելու:

Հարմանալի չէ մեզ համար, որ դուք, պ. Նազարեանց, ընտրում էք մեր յօդուածից միայն մին քանի բան իբր պա-

տասխան տալու համար . իսկ մնացած շատ առարկաների , որոց վերայ հաւասարապէս խօսել էինք մեք , ոչինչ պատասխան չէք գրում . երեսի մէ դժուար է եղել նոցա առաջին ձեզ արդարացնել : Կարդալով ձեր միաբը , մէ մեզ պատասխան էք գրում այն նպատակով , որ չիցէ մէ լուծութիւնը հաւանութիւն համարուի ձեր կողմից , եւ նկատելով՝ մէ մեր յօդուածից շատ բան թողնումէք անպատասխան , յայտնի տեսանումենք , որ մեր միւս բազմաթիւ ցուցմանց ճշմարտութիւնը ընդունումէք բոլորը՝ ձեր լուծեամբ :

Բայց զարմանալի է եւ հրաշալի բոլոր աշխարհի համար այն պատասխանը , որը որ բերումես բարձրապատիւ Արարատեանի խոհական քննութիւնների առաջ . նորա աշխատանքում եւ ազգի զգուշութեան համար տպագրութեամբ տարածած երկհատոր գրքերին , ուր ցոյց է տուել նա քո հարիւրաւոր սխալները ընդդէմ Հայկազեան լեզուի եւ կրօնի , ոչինչ պատասխան չտալով , կամեցել եւ իրը մէ պատասխանել գոնեա մին խօսքին , եւ այդ մասին ընտրել եւ նորա ասածը՝ « եւ ընդէ՞ր ծնելոյն չնմանիլ հարազատ մօր խրոսմ » . եւ ինչ եւ պատասխանում այդ խոհական ասացուածին . լսիր երկինք , ականջ դիր երկիր մեր եղկելի Հայոցս դաստիարակութեան վարժապետին . « Եթէ մի մայր արել է պոռնկութիւն , արդեօք խրատումն եւ նորա զաւակին նմանիլ եւ հետեւիլ իւր հարազատ մօր անզգամութեանը » : Ահա աշխարհիս երեսումը չլսած խօսք . ահա դաստիարակութեան հիմքերը քանդող ասացուած . ահա մին հարցմունք , որ աշխարհի ստեղծագործութիւնից սկսած մինչեւ այսօր՝ ոչ մին որդի չէ առաջարկել ինքը խրեան : Այդ խենդ ու խելառ պատասխանը , ասենք քո սիրած բառերով՝ զննող ու զննող քրիստոնեայ , ոչ մէ հերքումէ ըզգօնաժող Արարատեանի ասացուածը , այլ անամօթ եւ լիք անպարկեշտութեամբ մերժումէ հին եւ նոր դարերի համաշխարհական խրատները . սոսկալի մոլորութեամբ ոտնակոխ է առնում տասնարանեայ օրէնքը՝ « Պատուեան զհայր քո եւ զմայր քո » , ուր չէ յաւելցրած պայմանաբար եթէ մայրդ պոռնիկ ըլլնի , կամ հայրդ՝ մարդասպան . նորադանդ ըզլախոհութեամբ արհամարհումէ խմաստութեան պատուիրանները՝ « Լուր որդեակ խրատու հօր քո , եւ մի մերժեր զօրէնս մօր քո . . . որդեակ , մի մերժեր զխրատ մօր քո , ընկալ զնա ի գլուխ քո եւ արկ իրեն , զմանեակ ի պարանոց քո . (Իմաստ . գիրք) . . . մեռաւ հայր նորա եւ իրրուս մէ՞ ոչ մեռաւ , զի զնման ինքեան եթող զկին ինքեան . . . զպատուիրանս հօր լուարուք որդիք . . . որ երկնչի ի Տեառնէ՞ պատուէ զճնողս . (Էկզեսիաստիկ) : Այս եւ այլ անթիւ սոցա նման աշխարհաշէն խրատների վերայ է հիմնուած գերապատիւ Արարատեանի հանճարեղ խօսքը , ուր պէտք է օրինակ առնուլ եւ հասկանալ միշտ լաւը՝ բարին ու գեղեցիկը , եւ չպահանջել դորա համար պայման . եւ դու մօր պոռնկութիւնը որդու առաջը դնելով , ասումես յայտնապէս , մէ սուտ են հին եւ նոր դարերու դաստիարակութեան աստուածապատգամ դասերը : Այս տեղ բաց իքո յայտնի արհամարհանքը դէպ իքո ծնողքը եւ նախնիքը , մեք տեսանումենք քո անհիմն ուսումնականութիւնը , որովհետեւ կին բառը խառնումես մայր բառի հետ . կին մարդ եղել է եւ կայ աշխարհումը պոռնիկ եւ անզգամ , ուսումնազեղ դոկտօր , բայց մայր պոռնիկ եւ անզգամ՝ ոչ երբէք . մայրը պոռնիկ եւ անզգամ լինելու համար հարկաւոր է , որ նորա որդին ասէ այդ զարհուրելի խօսքը .

վասն զի սա առնչութիւն ունենալով դէպի իւր ծնողը՝ կրօնումէ որդի եւ կրօնումէ նորան մայր : Բեր ուրեմն հողագնտի վերայ մին որդի , մէ եւ Գոթթենթոսների կամ մարդակերաց աշխարհումը անբան կենդանուս նման անմտունդ , անդաստիարակ մեծացած , որ քո քստմենքի մշտքերով ճանաչէ իւր մօրը պոռնիկ , եւ ասէ՝ « Ինձ պէտք չէ նմանիլ , հնազանդիլ , սիրել եւ պատուել իմ հարազատ ծնող մօրս , վասն զի պոռնիկ է նա եւ անզգամ » : Վայ , վայ , այդ ո՞ր աշխարհի դաստիարակութեան դասերն են . խաւարամած լուսաւորութիւն . մարդասպան ու հողապառ գաղափարներ :

Զէ՛ , պ . նազարեանց , որքան աւելի քննումենք քո գրութեանը , այնքան առաւել հաստատութեանը մեր առաջին մտածութեան մէջ , մէ չկայ երբէք յոյս , որ երբ եւ իցէ քեզ ուղղես , Սի սոգրամ տե corrigas : Թող Աստուծոյ սիրոյ համար՝ Հայոց ազգի դաստիարակութիւնը , որին քո անծր նուիրելու պատճառով , ինչպէս ինքդ ասումես , թողել եւ քո հարազատ զաւակների սնունդը իւրեանց գերմանացի մօրը . իզուր , շատ իզուր . դաստիարակիր քո զաւակներին . մեր պատճառով մի գրկիր նոցա քո աննման դաստիարակութիւնից . ասա նոցա քո կանոնը , մէ նոքա այն ժամանակ կլինին գովելի զաւակներ , երբ չեն նմանիր իւրեանց ծնողին .

Սէնդան աղամ Թուրամաս ,

Թուրասաղա մոլլա բոլմաս .

Բոլսաղա օխումաս .

Օխասաղա՛ ետրամաս :

Վերջապէս , Դուկասեանի բերանով քո եւ քեզ դարձուցած՝ կեցցէ՛ նազարեանց բացազանչութեան մէջ սխալ ենք տեսնում . կեցցէ՛ բառը ենթադրումէ միայն կեանքի ցանկութիւն , առանց որոշելու կեանքի տեսակը . բայց կայ կեանք , որին նախադասելի է մահը , եթէ զուրկ է նա առողջութիւնից եւ միշտ կարօտ բժշկների օգնութեանը : Զգիտենք քո եւրոպեական լուսի մէջ կեանքի գլխաւոր բաղադրութիւնը ո՞րն է համարութեամբ . բայց մեք առողջութիւնն ենք ճանաչում իբրեւ նորա առաջին բարին .

En vain sans la santé la fortune caresse ,

Santé passe grandeur , santé passe richesse .

Եւ այդ հիման վերայ ցանկանումենք քեզ լինել առողջ , եւ ոչ մէ կեալ միայն եւ լինել միշտ հիւանդ , որպէս անորոշ ձեռով ցանկանումէ քեզ Պօղոս Դուկասեանը , որ այդ միջոցումը իւր անունը եւս ստորագրումէ քո տուած կանոններիւն ընդդէմ , որովհետեւ եթէ ընդունէր սրտով եւ մշտքով քո հոյսկապ եւ արգասաւոր գրքերի մէջ տուած նորաշէն լեզուի ուղղագրութեան կանոնները , որպէս լեզուով տարփողումէ քո լեզուն , պէտք էր գրէր Պօղոս Լուկասեան . այդ իսկ է խոստովանիլ , բայց ոչ հաւատալ . այլ ինչ խօսել եւ այլ ինչ առնել՝ լեզուով խօսել , եւ գրքով ջնջել : Կեցցես , կեցցես պ . նազարեանց , առանց հիւանդութեան . կեցցես Սաղանների համար . Լուսերի օրհնութիւնը պահպանէ քեզ միշտ առողջ ոտքից մինչեւ գլուխ , արմատից դէպ իվեր . իսկ մեք մնումենք

քո անվերջոր վարդապետութեան

մշտապես հերքող

ՅՈՎ.ՍԷՓ ԶԵՐԲԷՆԵԱՅ :